



Համարը
Տիպը Համաձայնագիր
Սկզբնաղբյուրը ՀՀԱԳՆՊՏ 2017.07.26/1(38)
Ընդունող մարմինը Հայաստանի Հանրապետություն
Ստորագրող մարմինը
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 29.12.2016

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Բեռլին
Ընդունման ամսաթիվը 06.04.2016
Ստորագրման ամսաթիվը 06.04.2016
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ, ՀՅՈՒՎԱՏՈՒՄԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՄ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության միջև դիվանագիտական ներկայացուցչության, հյուպատոսական հիմնարկի կամ մշտական ներկայացուցչության անդամների ընտանիքների անդամների վարձատրվող աշխատանքի մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ցանկանալով բարելավել դիվանագիտական ներկայացուցչության, հյուպատոսական հիմնարկի կամ մշտական ներկայացուցչության անդամների ընտանիքների անդամների վարձատրվող աշխատանքի հնարավորությունները,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1 Սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակների համար.

1. «Դիվանագիտական ներկայացուցչության, հյուպատոսական հիմնարկի կամ մշտական ներկայացուցչության անդամներ» նշանակում է՝ ուղարկող պետության ցանկացած աշխատող, ով նշանակվել է ընդունող պետությունում գործող դիվանագիտական ներկայացուցչությունում, հյուպատոսական հիմնարկում կամ միջազգային կազմակերպությանը կից մշտական ներկայացուցչությունում աշխատանքի:

2. «Ընտանիքի անդամներ» նշանակում է՝

ա) ամուսին,

բ) մինչև 25 տարեկան՝ չամուսնացած և տնտեսապես կախվածություն ունեցող երեխա, ինչպես նաև՝

գ) ցանկացած այլ անձ, ով ուղարկող պետության կողմից ծանուցվել է որպես ընտանիքի անդամ և ընդունվել է որպես այդպիսին ընդունող պետության կողմից,

ովքեր ընդունող երկրում դիվանագիտական ներկայացուցչության, հյուպատոսական հիմնարկի կամ մշտական ներկայացուցչության անդամի ընտանիքի մաս են կազմում մշտապես:

3. «Վարձատրվող աշխատանք» նշանակում է՝ վարձատրվող աշխատանքի ցանկացած ձև, որպես ինքնազբաղ անձ կամ աշխատող, ներառյալ մասնագիտական վերապատրաստումը:

Հոդված 2

Վարձատրվող աշխատանք կատարելու թույլտվություն

1. Ընտանիքի անդամներին թույլատրվում է, փոխադարձության հիման վրա, ընդունող պետությունում կատարել վարձատրվող աշխատանք: Անկախ սույն Համաձայնագրին համապատասխան տրված աշխատանքի թույլտվությունից՝ ընդունող պետությունում կկիրառվեն հատուկ մասնագիտությունների համար անհրաժեշտ կանոնները: Հիշյալ անհատները վարձատրվող աշխատանքի անցնելու կապակցությամբ պետք է ազատվեն կացության կարգավիճակ ստանալու պարտականությունից:

2. Ընդունող պետությունում դիվանագիտական ներկայացուցչության, հյուպատոսական հիմնարկի կամ մշտական ներկայացուցչության անդամի նշանակման ժամկետի ավարտի դեպքում պետք է դադարի ընտանիքի անդամի՝ վարձատրվող աշխատանք կատարելու թույլտվությունը:

Հոդված 3

Ընթացակարգեր

1. Եթե ընտանիքի անդամը ցանկանում է վարձատրվող աշխատանք կատարել, ուղարկող պետության դիվանագիտական ներկայացուցչությունը այդ մասին հայտագրով տեղեկացնում է ընդունող պետության արտաքին գործերի նախարարության արարողակարգի ծառայությանը: Պետք է նշվեն ընտանիքի անդամի անունը, գործատուի անունը և հասցեն, ինչպես նաև ցանկալի զբաղմունքի անվանումը:

2. Ընդունող պետության արտաքին գործերի նախարարությունը, սույն Համաձայնագրի դրույթների՝ ընտանիքի անդամի նկատմամբ կիրառելիությունը որոշելուն պես, անհապաղ գրավոր տեղեկացնում է ուղարկող պետության դիվանագիտական ներկայացուցչությանը, որ ընտանիքի անդամը վարձատրվող աշխատանք կատարելու թույլտվություն է ստանում:

3. Ուղարկող պետության դիվանագիտական ներկայացուցչությունը կծանուցի ընդունող պետության արտաքին գործերի նախարարությանը ընտանիքի անդամի՝ վարձատրվող աշխատանքի սկզբի և ավարտի մասին:

Հոդված 4

Անձեռնմխելիություն քաղաքացիական և վարչական իրավագործությունից

Եթե ընտանիքի անդամներն օգտվում են ընդունող պետության քաղաքացիական և վարչական իրավագործության անձեռնմխելիությունից՝ «Դիվանագիտական հարաբերությունների մասին» 1961 թվականի ապրիլի 18-ի Վիեննայի կոնվենցիայի կամ այլ կիրառելի միջազգային փաստաթղթի համաձայն, ապա այդ անձեռնմխելիությունը չի կիրառվում վարձատրվող աշխատանքի հետ կապված որևէ գործողության կամ անգործության նկատմամբ:

Հոդված 5

Անձեռնմխելիություն քրեական իրավագործությունից

1. Ընտանիքի այն անդամների դեպքում, ովքեր ընդունող պետությունում օգտվում են քրեական իրավագործության անձեռնմխելիությունից՝ «Դիվանագիտական հարաբերությունների մասին» 1961 թվականի ապրիլի 18-ի Վիեննայի կոնվենցիայի կամ այլ կիրառելի միջազգային փաստաթղթի համաձայն, ապա ընդունող պետության քրեական իրավագործությունից անձեռնմխելիության վերաբերյալ դրույթները կիրառվում են նաև վարձատրվող աշխատանքի առնչությամբ կատարած ցանկացած արարքի նկատմամբ: Այնուամենայնիվ, քրեական արարք կատարելու դեպքում ուղարկող պետությունը լրջորեն դիտարկում է ընտանիքի համապատասխան անդամի՝ ընդունող պետության քրեական իրավագործության անձեռնմխելիությունից հրաժարվելու հարցը:

2. Եթե ուղարկող պետությունը չի հրաժարվում ընտանիքի համապատասխան անդամի անձեռնմխելիությունից, ապա նա այդ անձի կատարած ցանկացած քրեական արարքի մասին տեղեկացնում է քրեական հետապնդում իրականացնող իր մարմիններին: Ընդունող պետությունը պետք է ծանուցվի քրեական վարույթի արդյունքների մասին:

3. Ընտանիքի անդամը կարող է որպես վկա հարցաքննվել վարձատրվող աշխատանքի առնչությամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ուղարկող պետությունը գտնում է, որ դա կհակասի իր շահերին:

Հոդված 6

Հարկային և սոցիալական ապահովության ռեժիմներ

Ընտանիքի անդամները ենթարկվում են ընդունող պետության հարկային և սոցիալական ապահովության ռեժիմներին այդ պետությունում իրենց վարձատրվող աշխատանքի առնչությամբ՝ այնքանով, որքանով դա չի հակասում այլ կիրառելի միջազգային փաստաթղթերին:

Հոդված 7

Փոփոխություններ և լրացումներ

Սույն Համաձայնագրում Կողմերի գրավոր համաձայնությամբ ցանկացած ժամանակ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ: Ցանկացած նման համաձայնություն ուժի մեջ կմտնի ներքոնշյալ 9-րդ հոդվածով նախատեսված կարգով:

**Հոդված 8
Վեճերի լուծման կարգը**

Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված բոլոր վեճերը կլուծվեն Կողմերի միջև՝ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

**Հոդված 9
Ուժի մեջ մտնելը և տևողությունը**

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի այն օրը, երբ Կողմերը միմյանց դիվանագիտական ուղիներով գրավոր կձանուցեն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին: Համապատասխան օրը կլինի վերջին ծանուցագրի ստացման օրը:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմնա 5 (հինգ) տարի և ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամանակաշրջանով մինչև յուրաքանչյուր Կողմ ցանկացած նման ժամանակաշրջանի լրանալուց 6 (վեց) ամիս առաջ մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցի սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Բեռլինում 2016թ. ապրիլի 6-ին, երկու հավասարազոր բնօրինակով՝ հայերեն, գերմաներեն և անգլերեն: Հայերեն և գերմաներեն տեքստերի մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում անգլերեն տեքստը կգերակայի:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2016թ. դեկտեմբերի 29-ին: